«ՄՈԴՈՒՍ ԳՐԱՆՈՒՄ» ՍՊԸ
«MODUS GRANUM» LLC

ՀՀ, Արարատի մարզ, գ. Արմաշ
Հեռ. (+374 93) 42-29-29
էլ.փոստ modusgranum@modusgranum.am

Armash vill, Ararat region, Republic of Armenia
Tel. (+374 93) 42-29-29
E-mail: modusgranum@modusgranum.am

ՀՀ շրջակա միջավայրի նախարար
պարոն Հ. Սիմիդյանին

Հարգելի պարոն նախարար

«Մոդուս Գրանում» ՍՊԸ ընկերությունը ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի տրավերտինների «Մանանա Գրեյն» տեղամասի տարածքում իրականացնում է օգտակար հանածոյի արդյունահանում համաձայն 02.12.2014թ.-ի ՆՇԱԹ-29/519 ընդերքօգտագործման թույլտվության:

Տեղամասի շահագործման ընթացքում ընկերության կողմից կատարվում են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ արտանետվող անօրգանական փոշու մշտադիտարկում,
2. բացահանքի տարածքում նավթամթերքների արտահոսքերի մշտադիտարկում,
3. հարակից տարածքների կենսաբազմազանության մոնիթորինգ՝ դիտողական զննման եղանակով :

Ստորև ներկայացնում եմ 2024 թվականի ընթացքում Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի տրավերտինների «Մանանա Գրեյն» տեղամասի տարածքում ընկերության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ ըստ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման հավելված 2-ով սահմանված ձևաչափի:

«Մոդուս Գրանում» ՍՊԸ
տնօրեն՝ Գ. Նիկողոսյան

14.02.2025 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք No 1-2000
«13» 02 2025 թ.